ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» փետրվարի 2017 թվական № 83-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի № 07-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի զինվորական կոմիսարի 2017 թվականի փետրվարի 23-ի թիվ 2/135 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի զինվորական կոմիսարիատի զինապարտների կցագրման հանձնաժողովի կազմում Կոնստանտին Մուսինյանի փոխարեն ընդգրկել Գագիկ Թադևոսյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զորակոչային տեղամասերին 2001 թվականին ծնված և ավագ տարիքի պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» № 07-Ա որոշման հավելվածի 4-րդ կետի 7-րդ ենթակետի «Կոնստանտին Մուսինյան» բառերը փոխարինել «Գագիկ Թադևոսյան» բառերով:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է